ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 06.12/364
06.12.2015 թ.

ՀՀ Ոստիկանության պետ
Վ. Գասպարյան
Պատճենները՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության
ղեկավար Վ. Շահինյան

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տ.
Մուկուչյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացնում է դիտորդական առաքելություն սույն թվականի դեկտեմբերի 6-ին ընթացող հանրաքվեի ընթացքում:

Կազմակերպություն է զանգահարել ՀՀ Լոռու մարզի Կուրթան գյուղի թիվ 32/54 տեղամասի հանձնաժողովի անդամ Գայանե Թունյանը, ով հայտել է, որ համայնքի ղեկավար Միհեր Գևորգյանը, ով միաժամանակ հանդիսանում է ՀՀԿ կուսակցության վստահված անձ, խոչընդոտում է հանձնաժողովի աշխատանքները՝ նշելով, որ սա իր տարածքն է, ինքն է ասելու՝ ինչպես անցնեն ընտրությունները:

Համայնքի ղեկավարը պնդում է, որ այն դեպքում, երբ անձը գալիս է ընտանիքի անդամների անձնագրերով, պետք է քվեարկի բոլորի փոխարեն:

Սույնով դիմում եմ Ձեզ՝ նշված փաստն ընդունել որպես հանցագործության մասին հաղորդում և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, նկարագրված խախտումը բացահայտելու ուղղությամբ և իրավական գնահատական տալ համայնքի ղեկավարի գործողություններին:

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am
հեռ.՝ 094042268